ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Բանակի օրվա կապակցությամբ

Սիրելի հայրենակիցնե՛ր, շնորհավորում եմ բոլորիս՝ Բանակի օրվա կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության տոնացույցում հունվարի 28-ը հիշատակվում է իբեւ Բանակի օր: Տոն, որն ամենքինս է եւ որը հպարտություն, հայրենասիրություն, արժանապատվություն եւ միասնականություն է ներշնչում: Այն սրբագործված է Հայաստանի սահմաններում եւ Արցախում հերոսացած հայորդիների սխրանքով, հայրենիքի ազատության համար զոհաբերած նրանց արյամբ:

Պատերազմի բովում ծնունդ առած մեր բանակը երկրի սահմանների հուսալի պաշտպանն է, մեր ժողովրդի խաղաղ եւ ապահով կյանքի երաշխավորը: Հայոց բանակը բոլոր ժամանակներում մեր ժողովրդի ազատատենչ հոգու կրողն է եղել, որով մեր պատմության վճռական պահերին կերտել է իր հաղթանակները: Այսօր էլ մեր բանակի մարտիկները հերոսանում եւ իրենց կյանքն են ընծայում հայրենիքին՝ դասվելով բոլոր ժամանակներում ի սեր հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին:

Բանակաշինությունը մեր երկրի պետականության կերտման ամենաակնառու ձեռքբերումներից է: Այսօր բոլորիս խնդիրը այդ բանակի պահպանումն ու հզորացումն է, դրա շուրջ բոլոր ուժերի համախմբումն ու մեկտեղումը: Այս գաղափարին է միտված երկրի նախագահ, ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանի, կառավարության ողջ համակարգի գործունեությունը:

Շնորհավորում եմ Հայոց բանակի բոլոր զինծառայողներին, մեր հայրենիքի աննկուն պաշտպաններին, մեր ողջ ժողովրդին: Մաղթում եմ խիզախություն, ուժ եւ կորով՝ ի փառս մեր անկախ պետության զորացման եւ հարատեւման:

Թո՛ղ որ մշտապես ջինջ ու անամպ լինի երկինքը, եւ այնտեղ ճախրի խաղաղությունը: